

կը պատճառէ Լէոպոլտոյ հայութեան (28) :

Վարդանովիչ այլեւս յուսալքուած կ'որոշէ Հայաստան վերադառնալ : 1672ի Յունիսին կը մեկնի դէպի Վենետիկ, մտադրելով շոտ եւս երթալ, եթէ Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովը հրամայէ : Քիչ ետք Վենետիկէն կը մեկնի Հայաստան (29) : Իսկ փոխանորդութեան խնդիրը ժամանակ մը կը յետաձգուի թուրքելեհահան պատերազմին հետեւանքով (1672-1673) (30) :

Ի վերջոյ Սրբազան Ժողովին հրամանագրով (6 Մեպտ. 1674), եւ Թորոսովիչ Արքեպիսկոպոսին ու Սոպիեսքի թաղաւորին հաւանութեամբ Լէոպոլտոյ թեմին օգնական Եպիսկոպոս կը կարգուի Վարդան Վ. Յունանեան, զոր շոտի մէջ կը ձեռնադրէ Թորոսովիչ Արքեպիսկոպոս (Մայիս 1675) (31) :

Վարդանովիչ Եպիսկոպոսին Հայաստան վերադառնալէն ետք, Յակոբ Կաթողիկոս այլեւս պաշտօնապէս չի միջամտեր Լէոպոլտոյ Արքեպիսկոպոսութեան մէջ : Հակառակ իր պատուիրակին գոած մերժումին, ան իր յարումը ցոյց կու տայ Կղեմէս Ժ. Քահանայապետին եւ ինքզինք կը պաշտպանէ չար լեզուներու դէմ : Ինչպէս վերեւ տեսանք, ան կը գրէ 29 Յունուար 1673ին, Քրիստոսի Փոխանորդին, Կղեմէս Պապին, բարեգոյն եւ

(28) Անդ 263-264 : (29) Անդ 264 : (30) Ազգայ. Բ. 2598-2599 :

(31) Sac. Gregorio Petrowicz, Ibidem 266 269.